ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ
համայնք, գ. Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 151-18
04 մայիս 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի կազմը հաստատելու մասին>> թիվ 68-Ա որոշումը:

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կապ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն և ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշումների՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետ համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) շտաբ:

2. ՔՊ շտաբի պետ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Միեր Մարգարյանին:

3. ՔՊ շտաբի պետին՝

1) Մշակել և մինչև 2018թ. մայիսի 10-ը իմ հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

4.Սարչապետ համայնքում ստեղծել տարահանման հանձնաժողով և համայնքային հետևյալ քաղաքացիական պաշտպանության ծառայությունները՝ համապատասխանաբար նշանակելով ղեկավարներ.

1) տարահանման հանձնաժողով, նախագահ՝ համայնքի դպրոցի զինղեկ Ֆելիքս Թորոսյանին.

2) կապի և ազդարարման ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անժելա Մարտիրոսյանին,

3) հասարակական կարգի պահպանման ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Կարո Իգնատյանին,

4) ինժեներական և տրանսպորտային միասնական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Իլյա Մարդոյանին,

5) բժշկական ծառայություն, պետ՝ Սարչապետ համայնքի բուժքույր Նարինե Բարսեղյանին,

6) կոմունալ-տեխնիկական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Ստեփան Ավետյանին,

7) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սվետլանա Բարսեղյանին,

8) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն, պետ՝ համայնքի անասնաբույժ Քերոբ Պողոսյանին:

5. Սարչապետ համայնքում ստեղծել հետևյալ կազմավորումները՝ համապատասխանաբար նշանակելով հրամանատարներ.

1) փրկարարական խումբ, հրամանատար՝ Ապավեն բնակավայրի վարչական ղեկավար Հովհաննես Խաչատուրյանին,

2) կապի օղակ, հրամանատար՝ Արծնի բնակավայրի վարչական ղեկավար Խաչիկ Էգնատոսյանին,

3) հակահրդեհային խումբ, հրամանատար՝ Պրիվոլնոյե բնակավայրի վարչական ղեկավար Էմիլ Գրիգորյանին,

4) հրատապ բուժօգնության օղակ, հրամանատար՝ Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Անժելա Մուկուչյանին,

5) հասարակական կարգի պահպանման խումբ, հրամանատար՝ Ձորամուտ բնակավայրի վարչական ղեկավար Արարատ Փնջոյանին,

6. հետախուզական խումբ, հրամանատար՝ Նորաշեն բնակավայրի վարչական ղեկավար Նիկոլայ Բաղդասարյանին:

7. Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ երկշաբաթյա ժամկետում մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ծառայության կանոնադրությունը, նախապես այն համաձայնեցնելով մարզային քաղաքացիական պաշտպանության համապատասխան ծառայության և Լոռու մարզային փրկարարական վարչության հետ:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. ապրիլ 26
գ.Սարչապետ